

Լոռու մարզի համայնքներում 2014թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն (ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 17-ի թիվ 159-Ա հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. հունվարի 17-ի թիվ 4 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Սահակյանս (հանձնաժողովի նախագահ), ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Լ. Քոչարյանս, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Է. Հախվերդյանս Եղեգնուտի գյուղապետարանում կատարեցինք վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2012թ. հունվարի 1-ից 2014թ. հունվարի 1-ը ընկած ժամանակաշրջանը:

Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Եղեգնուտ համայնքի ղեկավար Մ. Հովհաննիսյանը, աշխատակազմի քարտուղար՝ Կ. Ավետիքյանը, աշխատակազմի առաջատար մասնագետ - հաշվապահ՝ Մ. Ալիխանյանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Բյուջեի եկամուտների մուտքերը 2012թ.-ին նախատեսված 12760.0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 12723.1 հազ. դրամ՝ (99.7%): Սեփական եկամուտներից թերակատարվել է հողի հարկի գծով մուտքերը՝ նախատեսված 1473.1 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 1403.1 հազ. դրամ (95.2%):

2013թ.-ին նախատեսված 14148.5 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 14118.9 հազ. դրամ (99.8%): Թերակատարվել են հողի հարկի գծով գանձումները՝ նախատեսված 1345.7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1220.1 հազ. դրամ (90.7%):

Խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2.1 կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը «օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը»:

Եկամուտների թերակատարման հետևանքով թերակատարվել է նաև բյուջեով նախատեսված ծախսերը:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Համայնքի ղեկավարին առաջարկվել է օգտվելով իրեն վերապահված իրավասություններից առևտրի օբյեկտներում իրականացնել ստուգումներ և անօրինական գործունեության համար կազմել համապատասխան ակտեր և նշանակել տուգանքներ:

Հողի հարկի, գույքահարկի և վարձավճարների գանձված գումարները որոշ դեպքերում բանկ են մուծվում ուշացումներով: Գանձված հարկերի և վարձավճարների մնացորդը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 299.8 հազ. դրամ, իսկ 2014թ. փետրվարի 1-ի դրությամբ այն կազմում է 203.7 հազ.դրամ(հողի հարկից՝ 50.0 հազ. դրամ, գույքահարկից՝ 147.3 հազ. դրամ, հողի վարձավճարներից՝ 3.4 հազ. դրամ, տեղական տուրքերից՝ 3.0 հազ. դրամ): Նշված դեպքում խախտվել է ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի թիվ 750-Ն որոշման պահանջը, համաձայն որի Եղեգնուտ համայնքում գանձված հողի հարկի և գույքահարկի գումարները պետք է մուտքագրվեն տվյալ համայնքն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի (ՏԳԲ) համապատասխան գանձապետական հաշվին գանձումը կատարելուց հետո 5 օրվա ընթացքում:

Գանձված հողի վարձավճարների գումարները դրամարկղի գրքում մուտքագրվում են ուշացումներով, կամ խախտվել է ՀՀ կառավարության 2003թ. հոկտեմբերի 8-ի թիվ 1408-Ն որոշմամբ հաստատված «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգի» կետ 18-ի պահանջը՝ համաձայն որի «Դրամարկղային գրքում գրանցումը կատարվում է յուրաքանչյուր մուտքի կամ ելքի օրդերի հիման վրա՝ ոչ ուշ, քան կանխիկ դրամի ստացման կամ վճարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում: ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպություններում դրամարկղային գրքում գրանցումը կատարում են յուրաքանչյուր մուտքի կամ ելքի օրդերի հիման վրա՝ ոչ ուշ, քան դրամարկղային գրքի յուրաքանչյուր թերթի (գրանցումների) եզրափակման օրը»:

ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1) Ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգը ընդունել է 2012թ. նոյեմբերի 26-ի 16-ն որոշմամբ.

2) համայնքի ավագանին սահմանված կարգով հաստատել է 2012, 2013, 2014թթ. համայնքի բյուջեները.

3) հաստատել է բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

4) հաստատել է 2011թ և 2012թ բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, որոշումները չի ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, խախտվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջը.

5) համայնքի բյուջեի կատարման վերահսկման առումով պետք է նշել, որ համայնքի ավագանուն ներկայացվել է համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին 2012թ. 1-ին եռամսյակի և 3-րդ եռամսյակի հաղորդումները, խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը.

6) ավագանու 21.02.2013թ. թիվ 6-Ն որոշմամբ հաստատել է 2013-2016թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, սակայն չի ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, խախտվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջը.

7) չի որոշվել կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Հարկ է նշել որ խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը.

8) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման առումով պետք է նշել, որ համայնքի

ղեկավարի անհատական ակտերը չեն փակցվում ավագանու նստավայրում՝ գյուղապետարանի ցուցատախտակին: Հարկ է նշել, որ խախտել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը.

9) համայնքի ղեկավարի որոշումները ավագանու կողմից դատական կարգով չեն վիճարկվել.

10) ավագանու 2013թ. դեկտեմբերի 12-ի թիվ 28 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, «Հեքիաթ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

11) սահմանվել են 2012, 2013, 2014թթ. համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը, որոշումները ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն.

12) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրություն չի հաստատվել: Հարկ է նշել որ խախտվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը.

13) ավագանու որոշումներով հաստատվել են համայնքի սեփականության 2012թ. և 2013թ. ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

14) չի հաստատվել 2012թ. դրությամբ համայնքի հողային հաշվեկշիռը, խախտվել է ՀՀ Հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի պահանջը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՅՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հրավիրվել և վարվել են ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստեր.

2) համայնքի զարգացման քառամյա ծրագիրը ներկայացվել է ավագանու հաստատմանը.

3) իր իրավասության շրջանակում ընդունել է որոշումներ և արձակել է կարգադրություններ.

4) աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել են ավագանու հաստատմանը.

5) իրականացրել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ.

6) վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը.

7) գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ցուցատախտակին փակցված են ավագանու որոշումները, փակցված են տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը, ավագանու կանոնակարգը, աշխատակազմի կանոնադրությունը.

8) աշխարհագրական օբյեկտներին տրամադրել է հասցեներ.

9) համայնքի ղեկավարի կողմից հաստատվել են՝ «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման համայնքային պլանը», համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը.

10) գյուղապետարանում առկա է քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների մտից մատյան, գործադիր, տարածքային կառավարման մարմիններից և կազմակերպություններից ստացված գրությունների մտից մատյան, և կազմակերպություններ ուղարկվող գրությունների ելից մատյան:

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 28 հավելվածով հաստատված Եղեգնուտի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3 -ն են:

Համայնքի ավագանու 12.12.2013թ. N 28 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին, իսկ պաշտոնային դրույքաչափերը <<Համայնքային ծառայության մասին>> և <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքների պահանջներին:

2. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված կարգով:

3. Համայնքի ղեկավարի 06.04.2011թ. թիվ 19 որոշումով կատարել է փոփոխություն համայնքի ղեկավարի 06.07.2006թ. թիվ 40 կարգադրության մեջ: Հարկ է նշել, որ խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջը: Ելնելով վերոնշյալից հարկավոր է համայնքի ղեկավարի 06.04.2011թ. թիվ 19 որոշումը համարել անվավեր և համայնքի ղեկավարի նոր կարգադրությամբ կատարել փոփոխություն 06.07.2006թ. թիվ 40 կարգադրության մեջ:

4. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 30.01.2012թ. «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 02-Ն հրամանի հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցի «Կադրային գործի վարում» բաժնով նախատեսված կադրային գործի վարման այլ գործընթացներում թերություններ չեն հայտնաբերվել:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ստուգումներից պարզվեց՝ համաձայն 2013թ. հաստատված հողային հաշվեկշռի Եղեգնուտ համայնքում առկա է համայնքային սեփականություն հանդիսացող 9.47 հա վարելահող, 53.57 հա արոտ, 8.53 հա խոտհարք և 248.82 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամաս: Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը համայնքում առկա անասունների արածեցման նպատակով տրվում են օգտագործման, որոնց համար կատարվում են գանձումներ 1 կովի հաշվարկով 1000 դրամ, որը պակաս է հողի հարկի տարեկան դրույքաչափից, ինչպես նաև չեն կնքվել համապատասխան պայմանագրեր՝ խախտելով ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի <<Արոտավայրերից և

խոտհարքներից օգտվելու կարգը հաստատելու մասին»>> թիվ 1477 որոշման պահանջները:

2008 թվականի նոյեմբերի 20-ին <<Ղ Տելեկոմ>> ՓԲԸ-ի հետ, համայնքային սեփականություն հանդիսացող 200 մք գյուղատնտեսական նշանակության արոտի համար, առանց մրցույթի կնքվել է վարձակալության պայմանագիր: Նշված **հողամասում** այժմ գործում է <<Ղ Տելեկոմ>> ՓԲԸ-ի բջջային կապի կայանը: Խսախտվել է ՀՀ կառավարության 12.04.2001թ. <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի պահանջները **ինչպես** նաև ՀՀ հողային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները:

Սահմանված կարգով լրացված չէր համայնքի հողերի հաշվառման գիրքը:

Համայնքում բացակայում են՝ համայնքային և պետական սեփականության արոտների և խոտհարքների պայմանագրերի գրանցման, համայնքի կողմից իրականացված հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ ստուգումների հաշվառման մատյանները:

Հանձնարարվել է համայնքի ղեկավարին կասեցնել ապօրինի հողօգտագործումը և սահմանված կարգով հողամասը համապատասխանեցնել ըստ իրենց նպատակային և գործառնական նշանակության /ժամկետ 3 ամիս/:

Տրվել է ցուցում՝ 30 օրյա ժամկետում կազմել արոտների պայմանագրերի գրանցման և համայնքի կողմից իրականացված հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ ստուգումների հաշվառման մատյաններ:

Հանձնաժողովի նախագահ՝

Մարգարետարանի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ

----- Ա. Սահակյան

Եղեգնուտ համայնքի ղեկավար

----- Մ. Հովհաննիսյան

Անդամներ՝

Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

----- Ա. Բեշանյան

Եղեգնուտի գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար

----- Կ. Ավետիքյան

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործունեության համակարգման բաժնի
առաջատար մասնագետ

----- Լ. Քոչարյան

Եղեգնուտի գյուղապետարանի
աշխատակազմի առաջատար
մասնագետ- հաշվապահ

----- Մ. Ալիխանյան

Հողաշինության և հողօգտագործման
բաժնի առաջատար մասնագետ

----- Է. Հախվերդյան